ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ **ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվական

# ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Վախթանգ Բաբայանը, Թաթուլ Դումանյանը, Նորայր Մելքումյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Ռոբերտ Օհանյան, Արտակ Ստեփանյան, Սերյոժա Ավայան, Սիրաք Ռաֆայելյան, Համլետ Արամյան, Վահրամ Մխիթարյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռոբերտ Օհանյանը**

**Նիստը արձանագրում էր ՝ Արտակ Ստեփանյանը**

Լսեցին
***ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 21.01.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

Հաստատել համայնքի ավագանու՝ 21.01.2021թ. թիվ 1 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՕՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.**

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՒՐԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Լսեցին

***ՃԱՄԲԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵԸ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*|Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ|*

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1, 2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 2 որոշումը:

3. Առաջարկել Ճամբարակ համայնքի ղեկավարին՝ Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխությունները կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ Կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման 1-ին կետը ուժի մեջ է մտնում ՀՀ Կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:
5. Սույն որոշման դրույթները տարածվում են 2021թ. հունվարի 1-ից:

**Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.**

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Լսեցին

***2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*\/Զեկ. ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի 18-րդ մասով.

*Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝*

1. Հաստատել Ճամբարակ համայնքի տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (հավելված 1):
2. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 30 N 127 որոշումը: /Կից հավելվածով/
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

**Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.**

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՔՈՒՐԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Լսեցին

***ԾԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*<Զեկ. ՍԵՐՅՈԺԱ ԱՎԱԼՅԱՆ>*

Ղեկավարվելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները, մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը.

**Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է՝**

1. Ներքոհիշյալ անձանց և կազմակերպությունների համար սահմանել հողի հարկի արտոնություններ հետևյալ չափերով՝

| Հ/Հ | Հարկատուի անուն, ազգանուն | Հողի / գույքի գտնվելու հասցեն | Մայր գումար ՀՀ դրամ | Տույժ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1. | Ավալյան Վարուժան | գ. Թթուջուր | 70.000 | 40.926 |
| 2. | Վիրաբյան Նվեր | գ. Թթուջուր | 54.400 | 52.643 |

2. Սույն որոշման դրույթները տարածվում են 2021թ. հունվարի 1-ից:

**Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.**

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Լսեցին

***ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*Ձեկ. ՀԱԿՈԲ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների.

**Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է՝**

Հաստատել Ճամբարակ համայնքի 2021թ. բյուջեն՝ համաձայն N 1 հավելվածի՝
ա) Եկամուտների մասով՝ 491558.4 հազար դրամ
բ) Ծախսերի գծով՝ 498175.032 հազար դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամուտների՝ համաձայն հատված 1-ի
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ բյուջետային գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
6.«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն թույլատրել համայնքի ղեկավարին՝
ա) համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թ. հունվարի 1-ից:

***<u>Որոշման նախագիծն ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>***

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԽՈՆԴԿԱՐՅԱՆ ՄԱԿԻՉ

ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԻՇԱ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՒՐԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ

Ավագանու անդամներ

ԳԵՎՈՐԳ ԱԴԱՄՅԱՆ

ՄԱԿԻՉ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆ

ՄԻՇԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

*Համայնքի ղեկավարի փեղակալ*

ՌՈԲԵՐՏ ՕՀԱՆՅԱՆ____________

*Նիստն արձանագրեց՝* Արտակ Ստեփանյան